Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությունում քաղաքացիներից ստացված առաջարկությունների, դիմումների, բողոքների, ինչպես նաև աշխատակազմի և նախարարի կողմից քաղաքացիների ընդունելության թվաքանակի, բարձրացված հարցերի բնույթի և քննարկման արդյունքների մասին

1. 2014 թվականի հունվար-մարտ ամիսների ժամանակահատվածում ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը քաղաքացիներից ստացել է թվով 66 առաջարկություն, դիմում և բողոք, որից՝ 6-ը համապատասխան հանձնարարականներով վերահասցեագրվել է ՀՀ կառավարության աշխատակազմի կողմից:

Դիմումները՝ ըստ բնույթի	**Ընդամենը**	**Պատասխանվել է**	**Տրվել է դրական լուծում**	**Տրվել է պարզաբանում**	**Մերժվել է**	**Ծանոթություն**
Առանց ավելացված արժեքի հարկի հաշվարկման և գանձման սերմացուների ներկրման ենթակա լինելու վերաբերյալ եզրակացություն տրամադրելու մասին	11	11	11			
Կորնգանի և առվույտի սերմացու, դիզելային վառելանյութ, ազոտական, կալիումական և ֆոսֆորական պարարտանյութեր հատկացնելու մասին	3	3	1	2		2 դիմումատուի պարզաբանվել է, որ ՀՀ 2014 թվականի գարնանացանի համար գարու, եգիպտացորենի, առվույտի և կորնգանի արտադրության զարգացման ծրագրի համաձայն՝ մարզպետարանների կողմից ներկայացված պահանջարկին համապատասխան մարզին հատկացվել են սերմացուներ: Ծրագրի շրջանակներում կորնգանի և առվույտի սերմացու ստանալու համար անհրաժեշտ էր նախօրոք դիմել համայնքի ղեկավարին:

						Միաժամանակ պարզաբանվել է, որ ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը սերմացուների այլ պաշարների չի տնօինում:
Հանրապետություն ներկրվող տոհմային երինջների խմբաքանակից երինջներ հատկացնելու և անասնագոմ կառուցելու գործում աջակցելու, տարաժամկետ վճարման պայմանով տրամադրված երինջների դիմաց վճարման ժամանակացույցում փոփոխություն կատարելու մասին	9	6		6		3 դիմում ընթացքի մեջ է: 6 դիմումատուի պարզաբանվել է, որ նրանց դիմումները վերցված են հաշվառման և կքննարկվեն ՀՀ գյուղատնտեսության նախարարության Հայաստանի Հանրապետություն ներկրվող տոհմային երինջների բաշխման հանձնաժողովի կողմից և արդյունքների մասին լրացուցիչ կտեղեկացվի: 1 դիմումատուի պարզաբանվել է, որ համապատասխան ֆինանսական միջոցների բացակայության պատճառով ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը չի կարող աջակցել անասնագոմի կառուցման գործում: Միաժամանակ առաջարկվել է դիմումատուին, 20 գլուխ կաթնատու ցեղի կենդանիներ ձեռք բերելու համար ՀՀ գյուղատնտեսության նախարարություն ներկայացնել հայտ՝ նշելով կենդանու ցեղը, ինչպես նաև համապատասխան փաստաթղթեր՝ սեփականության կամ վարձակալության իրավունքով նրա կողմից տնօրինվող անասնագոմի և հողատարածքների վերաբերյալ:

Անտառային հող վարձակալության հանձնելու և վարձակալած հողի կատեգորիան փոխելու, հողատարածք սեփականաշնորհելու թույլտվություն տալու մասին	3	3		3		1 դիմում վերահասցեագրվել է ՀՀ Լոռու մարզպետարան: 1 դիմումատուի պարզաբանվել է, որ անտառային հողերի վարձակալության իրավունքը և նոր պայմանագիր կնքելու թույլտվությունը տրամադրվում է համաձայն ՀՀ կառավարության 2007 թվականի մայիսի 24-ի N 806-Ն որոշմամբ սահմանված կարգի՝ լիազոր մարմնի կողմից անցկացվող մրցույթի արդյունքում: ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից կհայտարարվի մրցույթ, որի մասին հրապարակային ծանուցում կտեղադրվի www.azdarar.am հասցեում գտնվող ՀՀ հրապարակային ծանուցումների և www.minagro.am կայքերում: 1 դիմումատուի ներկայացվել է ՀՀ Կոտայքի մարզպետի և Ձորաղբյուր համայնքի ղեկավարի կարծիքները՝ հողատարածքը բնակավայրի հողերի կատեգորիայից կրկին գյուղատնտեսական նշանակության հողերի կատեգորիա փոխադրելու հարցի վերաբերյալ:

Կաղամբի մշակությունը հայրենական որակյալ սորտերով կազմակերպելու մասին	2	2		2		2 դիմումատուի պարզաբանվել է, որ շուկայական հարաբերությունների պայմաններում նախարարությունը չի կարող տնտեսավարողներին պարտադրել ընտրելու մշակաբույսերի սորտեր: Մշակաբույսերի նոր, արդյունավետ սորտերի, դրանց մշակության տեխնոլոգիաների ներդրման նպատակով ՀՀ գյուղատնտեսության նախարարության գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոնների կողմից տնտեսավարողներին տրամադրվում է խորհրդատվություն, ինչպես նաև իրականացվում են սեմինարներ մշակաբույսերի աճեցման արդյունավետ տեխնոլոգիաների վերաբերյալ:
Գյուղատնտեսության տարբեր ոլորտների գործունեության վերաբերյալ տեղեկատվություն ներկայացնելու մասին	3	3	3			
Խնձորի բերքի իրացման և մեղրի արտահանման գործում օժանդակելու մասին	2	2		2		1 դիմումատուի պարզաբանվել է, որ մեղրի արտահանման հնարավորության դեպքում նրա խնդրանքը հաշվի կառնվի: 1 դիմումատուի պարզաբանվել է, որ հանրապետության պտուղբանջարեղեն վերամշակող ընկերությունների կողմից խնձորի մթերման գործընթացն ավարտվել է և առաջարկվել է նրան դիմել

						հանրապետությունից խնձոր արտահանող <Սպայկա> և <Մադաթ-Մար> ՍՊԸ-ներին:
Պտղատու ծառերի տնկիներ տրամադրելու մասին	4	4		4		2 դիմումատուի պարզաբանվել է, որ 2011-2013 թվականներին նրանց տրամադրվել են սոճու և տարբեր պտղատու ծառերի տնկիներ: Միաժամանակ, դիմումատուներին տեղեկացվել է տնկիների տեսականու և դրանք ձեռք բերելու հնարավորության մասին: 2 դիմումատուի պարզաբանվել է, որ հանրապետությունում տնկանյութի արտադրությունը և իրացումն իրականացվում է մասնավոր տնտեսավարողների կողմից և ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը տնկանյութի պաշարների չի տնօրինում:
Աշխատած ժամանակաշրջանի և աշխատավարձի չափի վերաբերյալ արխիվային փաստաթղթերի պատճեններ և տեղեկանքներ տրամադրելու մասին	4	4	1	3		3 դիմումատուի պարզաբանվել է, որ ՀՀ գյուղատնտեսության նախարարությունում նրանց աշխատած տարիների վերաբերյալ արխիվային փաստաթղթեր առկա չեն: Միաժամանակ առաջարկվել է 2 դիմումատուի դիմել <<Հայաստանի ազգային արխիվ>> պետական ոչ առևտրային կազմակերպություն, 1 դիմումատուի՝ ՀՀԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության <<Հանրապետական անասնաբուժասանիտարական և բուսասանիտա-

						ական լաբորատոր ծառայությունների կենտրոն>>ՊՈԱԿ:
Ծառայության մատուցման պայմանագրով անասնաբույժ աշխատած ժամանակահատվածի վերաբերյալ տեղեկանք տրամադրելու մասին	9	9	9			
Գյուղատնտեսության ոլորտում տարբեր ծրագրային առաջարկներ իրականացնելու մասին	4	4		4		1 դիմումատուի պարզաբանվել է, որ արոտավայրերի ճիշտ և նպատակային օգտագործումը կարևոր նշանակություն ունի հանրապետությունում անասնաբուծության, հատկապես ոչխարաբուծության զարգացման գործում: ՀՀ կառավարության 2011 թվականի ապրիլի 14-ի N 389-Ն որոշմամբ հաստատվել է արոտավայրերի և խոտհարքների օգտագործման կարգը, որով սահմանվել են պետական սեփականություն հանդիսացող հողերի վրա գտնվող արոտավայրերի և խոտհարքների կառավարման և արդյունավետ օգտագործման պայմանները: Միաժամանակ տեղեկացվել է, որ Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող <<Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության ծրագրի>> շրջանակներում հանրապետության 6 մարզերի 67 համայնքում ստեղծվել են արոտօգտագործման կոոպերատիվներ:

						1 դիմումատուի պարզաբանվել է, որ գյուղատնտեսության բնագավառում ապահովագրության ներդրումը բարդ գործընթաց է և պահանջում է ֆինանսական լուրջ ներդրումներ: Սակայն, հանրապետության տարբեր մարզերում իրականացվում է անասնապահության ապահովագրության փորձնական ծրագիր: 1 դիմումատուի պարզաբանվել է, որ թթվածնահագույց նյութ ստանալու և գյուղատնտեսության մեջ այն կիրառելու առաջարկության վերաբերյալ կարծիք հայտնելու համար անհրաժեշտ է նախարարություն ներկայացնել դրա նկարագիրը, օգտագործվող նյութի չափաքանակները, կիրառման ժամկետները, պարբերականությունը, կատարված փորձարկումների արդյունքները և դրանց վերաբերյալ մասնագիտական եզրակացությունները: 1 դիմումատուի պարզաբանվել է, որ <<Անասնապահության և անասնաբուծության բնագավառում հեռախորհրդատվության և հեռաուսուցման գործնական ծրագրի >> վերաբերյալ նրա առաջարկությունները 2014 թվականի փետրվարի 1-ին քննարկվել են ՀՀ գյուղատնտեսության նախարարությունում և նրան տրվել են

						համապատասխան պարզաբանումներ:
Աշխատանքի ընդունելու և աշխատանքում վերականգնելու մասին	3	3	1	2		1 դիմումատուի պարզաբանվել է, որ հաշվի առնելով նրա Հայաստանի ազգային ագրարային համալսարանի անասնաբուժական բժշկագիտության և անասնաբուծության ֆակուլտետի անասնաբուժական սանիտարիայի փորձաքննության բաժնի 4-րդ կուրսում սովորելու հանգամանքը ու համայնքային անասնաբույժ աշխատելու ցանկությունը՝ առաջարկվում է մեկամսյա աշխատանքային փորձաշրջան անցնել համայնքային անասնաբույժի մոտ: Փորձաշրջանի արդյունքների հիման վրա կորոշվի նրան աշխատանքի ընդունելու հարցը: 1 դիմումատուի պարզաբանվել է, որ 2013 թվականի <<Անասնաբուժասանիտարիայի, սննդամթերքի անվտանգության և բուսասանիտարիայի ոլորտի ծառայությունների մատուցում>> ծրագրով Երևան քաղաքում բուսասանիտարական մոնիթորինգի աշխատանքներ չեն նախատեսվել, ուստի դիմումատուին առաջարկվել է դաշտային հետազոտություններ իրականացնել ՀՀ Տավուշի կամ Գեղարքունիքի մարզերում, սակայն քանի որ նա հրաժարվել է, այդ պատճառով ազատվել է

						աշխատանքից հաստիքի կրճատման հիմքով: Հնարավորության դեպքում դիմումատուին կառաջարկվի համապատասխան աշխատանք:
Տարաբնույթ հարցեր (բույսերի պաշտպանության միջոցների վաճառքը կանոնակարգելու, <<Պատվավոր քաղաքացի>> կոչում շնորհելու համար միջնորդելու, առցանց համակարգով սխալմամբ նախարարության հաշվեհամարին փոխանցված գումարի դիմաց ծառայություն չմատուցելու վերաբերյալ տեղեկանք տրամադրելու, Սև ջուր գետի ջուրն օգտագործելու, հողատարածքի ցանկապատման օրինակացման վերաբերյալ իրավական պարզաբանում տալու, անասնաբույժի աշխատավարձի չափը վերանայելու, գյուղատնտեսական տեխնիկա հատկացնելու, վարկ տրամադրելու, <<Զորավիգ>> թերթում հրապարակված <<Սպառողի իրավունքները պաշտպանված են>> հոդվածի մասին)	9	9	2	7		1 դիմում վերահասցեագրվել է ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտե, 1 դիմում՝ ՀՀ քաղաքաշինության նախարարություն:
ԸՆԴԱՄԵՆԸ	**66**	**63**	**28**	**35**		**3 դիմում ընթացքի մեջ է:**

2. 2014 թվականի հունվար-մարտ ամիսների ժամանակահատվածում ՀՀ գյուղատնտեսության նախարարությունում կատարվել է քաղաքացիների 41 ընդունելություն

Ընդունելության ընթացքում քաղաքացիների կողմից բարձրացված հարցերի բնույթը	Ընդամենը	Պատասխանվել է	Տրվել է դրական լուծում	Տրվել է պարզաբանում	Մերժվել է	Ծանոթություն
Վառելափայտ տրամադրելու մասին	1	1		1		
Պարարտանյութ տրամադրելու մասին	1	1		1		
Ոռոգման խողովակաշարի վերանորոգման գործում աջակցություն ցուցաբերելու մասին	1	1		1		
Գյուղատնտեսական տեխնիկա հատկացնելու մասին	15	15		15		
Տոհմային երինջներ հատկացնելու մասին	1	1		1		
Հացահատիկային մշակաբույսեր հատկացնելու մասին	10	10		10		
Դիզելային վառելանյութ տրամադրելու մասին	8	8		8		
Պարարտանյութի օգտագործման տեխնոլոգիայի վերաբերյալ մասնագիտական խորհրդատվություն տալու մասին	2	2	2			
Անտառային տարածքից հողատարածք վարձակալելու մասին	1	1		1		
«Оганек» ամսաթերթում հրապարակված պարարտանյութի օգտագործման հետևանքով քաղցկեղի առաջացման վտանգի վերաբերյալ հոդվածի մասին	1	1	1			
ԸՆԴԱՄԵՆԸ	**41**	**41**	**3**	**38**		